# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶ

# ՍԱՍՈՒՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ 24

17 նոյեմբերի 2017 թվական

## ՍԱՍՈՒՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 7 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Սասունիկ համայնքի ավագանու թիվ 7 նիստի օրակարգը:

1. Սասունիկ համայնքի 1387-0002 ծածկագրի տակ գտնվող 0.00873 հա համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքը ուղղակի վաճառքով օտարելու մասին:
2. Սասունիկ համայնքի 2017 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին:
3. Սասունիկ համայնքի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի կազմում ավագանու քանակական և անհատական կազմի հաստատման մասին:
4. Սասունիկ համայնքի վարչական տարածքում գործող իրավաբանական սուբյեկտների աղբահանությունը կազմակերպելու համար գանձվող վճարների սահմանման մասին:

| | | |
|---|---|---|
| կողմ-6 | դեմ-0 | ձեռնապահ-0 |

Գրիգորյան Դավիթ

Ավետիսյան Արմեն

Մարգարյան Հունան

Մարգարյան Տոնիկ

Գևորգյան Գևորգ

Քոլայան Գրիգորի

ՍԱՍՈՒՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ

2017թ. նոյեմբերի 17
գ. Սասունիկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶ
# ՍԱՍՈՒՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

ՈՐՈՇՈՒՄ 25
17 նոյեմբերի 2017 թվական

## ՍԱՍՈՒՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ 1387-0002 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ 0.00873 ՀԱ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի և Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 26.05.2016թ-ի N550-Ն «Քաղաքացիներին կամ իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող կառուցապատված հողամասերի, ինչպես նաև գյուղատնտեսական նշանակության հողամասերի ընդլայնման նպատակով տրամադրման ենթակա հողամասը որպես առանձին գույքային միավոր աճուրդային կարգով օտարելու անհնարինության որոշման չափորոշիչներ սահմանելու մասին» որոշման պահանջներով Սասունիկ համայնքի ավագանին **որոշում է՝**

1. Սասունիկ համայնքի սեփականություն համարվող 1387-0002 ծածկագրի տակ գտնվող 0.00873 հա բնակավայրի հասարակական կառուցապատման հողատարածքը ուղղակի վաճառքով օտարել «Արմենիա Վայն» ՍՊԸ-ին՝ 1 քմ-ը 1242 (մեկ հազար երկու հարյուր քառասուներկու) ՀՀ դրամ:
2. Հողատարածքի վաճառքի գինը կազմում է 108.430 (հարյուր ութ հազար չորս հարյուր երեսուն) ՀՀ դրամ:
3. Չեղյալ համարել Սասունիկ համայնքի ավագանու 09.10.2017թ-ի N6 նիստի N23 որոշումը:

Կողմ -6 Դեմ -0 Չեռնպահ -0

Գրիգորյան Դավիթ

Ավետիսյան Արմեն

Մարգարյան Հունան

Մարգարյան Տոնիկ

Գևորգյան Գևորգ

Քոլայան Գրիգորի

**ՍԱՍՈՒՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

2017թ. նոյեմբերի 17
գ. Սասունիկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՍԱՍՈՒՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ 26
17 նոյեմբերի 2017 թվականի
ՍԱՍՈՒՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2017Թ-Ի ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով Սասունիկ համայնքի ավագանին որոշում է՝

Սասունիկ համայնքի 2017 թվականի տարեկան բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.

Եկամտային մասում՝
պահուսային ֆոնդի 5.0 մլն դրամ գումարը տեղափոխել վարչական բյուջե՝ հետագայում ետ վերադարձնելու պայմանով

**Վարչական բյուջե**

| | |
|---|---|
| 1.1.1 ծրագրի | |
| 4233 հոդվածից պակասեցնել | 200.0 հազար դրամ |
| 4234 հոդվածից պակասեցնել | 193.2հազար դրամ |
| 4823 հոդվածից պակասեցնել | 50.0 հազար դրամ |
| 8.2.3 ծրագրի | |
| 4251 հոդվածից պակասեցնել | 200.0 հազար դրամ |
| 10.7.1 ծրագրի | |
| 4729 հոդվածին ավելացնել | 200.0 հազար դրամ |
| 1.1.1 ծրագրի | |
| 4239 հոդվածին ավելացնել | 200.0 հազար դրամ |
| 4269 հոդվածին ավելացնել | 243.2 հազար դրամ |
| 8.2.4 ծրագրի | |
| 4239 հոդվածին ավելացնել | 250.0 հազար դրամ |
| 4269 հոդվածին ավելացնել | 532.5 հազար դրամ |
| 9.1.1 ծրագրի | |
| 4637 հոդվածին ավելացնել | 3900.0 հազար դրամ |
| 9.2.1 ծրագրի | |
| 4729 հոդվածին ավելացնել | 317.5 հազար դրամ |

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

Գրիգորյան Դավիթ
Ավետիսյան Արմեն
Մարգարյան Հունան
Մարգարյան Տոնիկ
Գևորգյան Գևորգ
Քոլայան Գրիգորի

**ՍԱՍՈՒՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա.ՄԱՐԳԱՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶ
# ՍԱՍՈՒՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ 27
17 նոյեմբերի 2017 թվական

## ՍԱՍՈՒՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՒՄ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԵՎ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Համայնքային ծառայության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետով Սասունիկ համայնքի ավագանին **որոշում է՝**

1. Սասունիկ համայնքի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի կազմում ընդգրկել ավագանու անդամներ՝ Դավիթ Գրիգորյանին, Արմեն Ավետիսյանին և Գրիգորի Քոլայանին:
2. Ուժը կորցրած ճանաչել Սասունիկ համայնքի ավագանու 05 դեկտեմբերի 2013թ-ի թիվ 18-Ա որոշումը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

Գրիգորյան Դավիթ
Ավետիսյան Արմեն
Մարգարյան Հունան
Մարգարյան Տոնիկ
Գևորգյան Գևորգ
Քոլայան Գրիգորի

ՍԱՍՈՒՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ

2017թ. նոյեմբերի 17
գ. Սասունիկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶ
# ՍԱՍՈՒՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

ՈՐՈՇՈՒՄ 28
17 նոյեմբերի 2017 թվական

## ՍԱՍՈՒՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 20-րդ կետի, ինչպես նաև հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Սասունիկ համայնքի ավագանին **որոշում է՝**

Սասունիկ համայնքի վարչական տարածքում գործող իրավաբանական սուբյեկտների համար աղբահանության վճար, յուրաքանչյուր ամսվա կտրվածքով, սահմանել հետևյալ դրույքաչափերը՝

1. Առևտրի /այդ թվում շուկաների/, հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ – 20 դրամ/1քառ. մ
2. Հյուրանոցներ և հյուրանոցային ծառայություններ - 10 դրամ/1քառ. մ
3. Արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինություններ - 6 դրամ/1քառ. մ
4. Կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական շինություններ - 3 դրամ/1քառ.:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

Գրիգորյան Դավիթ
Ավետիսյան Արմեն
Մարգարյան Հունան
Մարգարյան Տոնիկ
Գևորգյան Գևորգ
Քոլայան Գրիգորի

ՍԱՍՈՒՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ

2017թ. նոյեմբերի 17
գ. Սասունիկ